ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հուլիսի 2025 թվականի N 891-Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետն ու 22-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի Հ. Ոսկանյանի անվան հ. 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն (այսուհետ՝ կազմակերպություն) անհատույց օգտագործման իրավունքով ամրացված, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Մարշալ Բաղրամյան փողոց, 2-րդ փակուղի, 1 դպրոց հասցեում գտնվող գույքի կազմից առանձնացված և որպես առանձին գույքային միավոր գրանցված, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Մարշալ Բաղրամյան

փողոց, 2-րդ փակուղի, 1/1 հասցեում գտնվող, 6 345 687.15 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, 0.33795 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 17042025-02-0067 վկայական) (այսուհետ՝ գույք) հետ վերցնել և նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքին (այսուհետ՝ համայնք)՝ բարեկարգման աշխատանքների իրականացման, ճանապարհի, դրան հարակից անվտանգության գոտիների կառուցման և սպասարկման նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կազմակերպության հետ կնքել 2023 թվականի հունիսի 21-ին կնքված «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման» N 35/0023 պայմանագրում սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր՝ համաձայնագրում նախատեսելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և դրանից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ՝

ա. սովորողների ուսումնական գործունեության անխափան կազմակերպման և անվտանգ տեղաշարժի ապահովման նկատառումներից ելնելով՝ համայնքը պարտավոր է գույքը սահմանազատել կազմակերպության տարածքից և ստեղծել անվտանգային գոտի,

բ. նվիրաբերության պայմանի խախտման հիմքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրաբերության վերացման դեպքում նվիրաբերություն ստացողի կողմից նվիրաբերված գույքի վրա կատարված անբաժանելի բարելավումները փոխհատուցման ենթակա չեն:

3. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պայմանագրի կնքումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ